Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովվում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդավանի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարինե Ղարագյոզյան

Կատարող՝ Լիլիթ Աթոյան

Բերդավան 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ 1. Բուլինգ ---------- 5

1.1.Ի՞նչ է բուլինգը----------5

1.2 Բուլինգի տեսակները և դրսևորումները ----------7

1.3 Բուլինգի ենթարկող (հալածող) երեխաների բնութագիրը----------8

1.4 Դպրոցական բուլինգի զոհերի բնութագիրը----------11

ԳԼՈՒԽ 2. Բուլինգի պատճառները---------- 14

2.1 Բուլինգի հետևանքները----------15

Գլուխ 3 Բուլինգի կանխարգելման արդյունավետ և ոչ արդյունավետ մեթոդները ----------16

3.1Բուլինգի կանխարգելման և արձագանքի սխալ եղանակները----------16

3.2 Բուլինգի կանխարգելման և արձագանքի լավագույն փորձերը----------17

Վերլուծություն----------20

Եզրակացություն----------24

Ներածություն

Դպրոցներում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ:Տարբեր երկրներում գործում են հակաբուլինգային կամ անտիբուլինգային ծրագրեր: Այդ երկրներն են՝ Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ, Կանադան, Շվեդիան, ՈՒկրանիան, Իսպանիան: Հետազոտական աշխատանքում անդրադարձել ենք կրթության համակարգում աշակերտների նկատմամբ բռնության երևույթին, դրսևորման պատճառներին, առաջարկելով դրանց նախականխմանը և կանխմանն ուղղված աշխատանքներ:

Հետազոտական աշխատանքի արդիկանությունը.

Ներկա ժամանակներում արդիական և հրատապ է հասարակության տարբեր շրջաններում՝ հատկապես կրթական համակարգում, բուլինգի առկայության ուսումնասիրությունը, նաև տվյալ երևույթի նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուլինգ երևույթով սկսել են զբաղվել վերջին տարիներին և երևույթի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բնակչության մեջ ցածր տոկոս է կազմում:

Ցավոք, 2018թ. Յունիսեֆի զեկույցը փաստում է, որ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել, 39 զարգացած երկրներում 10 աշակերտից 3-ն ասել է, որ բուլինգի է ենթարկել իր դասընկերոջը: Ինչ վերաբերվում է Հայաստանյան իրավիճակին, <<Save the Children>>-ի և <<World Vision>>-ի կողմից 2017թ. -ին Հայաստանում իրականացված «Երեխաների կարծիքով» հետազոտության տվյալների համաձայն, միջին դասարանների աշակերտների շուրջ 40 %-ը շաբաթական 1-5 անգամ դպրոցում ականատես է լինում ծաղրի կամ կռվարար պահվածքի: Առավել հաճախ՝ 21% դեպքերում ծաղրի են ենթարկվում արտաքին տեսքի համար:

Մեր օրերի հասարակությունը կրթությունից պահանջում է կրթել համակողմանի զարգացած,լայն մտահորիզոն ունեցող,դաստիարակված,բարոյապես զարգացած սերունդ: Այդ խնդիրները կարելի է լուծել բարեփոխված կրթության,կայուն ու խորը գիտելիքներ ձեռք բերելու ,տեսությունն ու պրակտիկան զուգակցելու, յուրացրած գիտելիքները,կարողություններն ու հմտությունները կյանքում կիրառելու միջոցով ,ինչով էլ պայմանավորված է մեր հետազոտական աշխատանքի արդիականությունը*:*

Հետազոտական աշխատանքի *նպատակը.*

Կրթական միջավայրում բուլինգի տարածվածության և դրսևորման առանձնահատությունների բացահայտումը :

Հետազոտական աշխատանքի *խնդիրները* Բացահայտել առաջացման մոտիվները

- Բացահայտել աշակերտների շրջանում բուլինգի հետևանքների իրազեկվածության մակարդակը:
- Ներկայացնել կանխարգելմանն ուղղված միջոցները
- Ապահովել ուսումնական անվտանգ միջավայր

Գլուխ 1. Բուլինգ

1.1Ի՞նչ է բուլինգը

Դպրոցը կարևոր սոցիալական օղակ է, իսկ դասարանը՝ առաջնային սոցիալական խումբ, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են սեփական անձի, կյանքի, նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Կրտսեր և միջին տարիքի դպրոցականները չունենալով կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ, երբեմն վիճում, հարվածում են միմյանց, սակայն հաճախ՝ որոշ ժամանակ անց համաձայնության են գալիս, երբեմն նույնիսկ ընկերներ են դառնում: Երեխաների, հատկապես տղաների համար ֆիզիկական ուժի կիրառումը հաճախ ինքնահաստատման միջոց է դառնում: Այս ճանապարհով ստեղծված ոչ ֆորմալ հիերարխիկ հարաբերությունները սովորաբար ընդունվում են երեխաների կողմից: Այլ դեպքերում երեխաները ագրեսիա են ցուցաբերում, երբ իրենց վտանգված են զգում և ցանկանում են վերահսկել իրավիճակը, և որպես պաշտպանություն նրանք կարող են բղավել, հարվածել, վնասել մյուսներին՝ ի պատասխան վտանգի զգացողության: Բնականաբար, այս վարքաձևերը ոչ միայն ընդունելի չեն, այլև հանգեցնում են բռնության տարածմանը: Այս առումով, շատ կարևոր է խնդրահարույց իրավիճակներում ծագած խնդիրները առանց կոնֆլիկտի և բռնության հաղթահարելը: Ընդգծված ագրեսիվ վարքագիծ ունեցող երեխաների նմանատիպ գործողությունների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել և կիրառել հատուկ ծրագրեր և մասնագիտական մոտեցումներ: Կարևոր է հաշվի առնել երեխայի բռնության դրսևորման պատճառներն, ձևավորել առանց բռնություն կիրառելու ինքնադրսևորման և ինքնահաստատման կարողություններ:

Երեխաների կողմից դրսևորվող ոչ բոլոր ագրեսիվ վարքագծերն են, որ կարող են բուլինգ համարվել: Շատ դեպքերում բուլինգը շփոթում են կոնֆլիկտի հետ, բայց մի շատ կարևոր փաստի պետք է ուշադրություն դարձնենք՝ **բուլինգը կոնֆլիկ չէ**:

Կոնֆլիկտի երկու կողմերը հավասար են, իսկ **բուլինգի** դեպքում կողմերը հավասար չեն:

Այսինքն զոհի կողմը պաշտպանվելու ընդունակ չէ, թե՛ հոգեպես,թե՛ ֆիզիկապես:

Բուլինգը կամ **հալածանքը**, որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն է այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ: Բուլինգ տերմինը առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո, իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից:

Բուլինգը, անձի կամ անձանց կողմից անցանկալի ագրեսիվ վարքագիծ է,որը ներառում է տեսանելի կամ ընդունելի ուժային անհավասարություն և բազմիցս կարող է կրկնվել, կամ ամենայն հավանականությամբ կկրկնվի:Բուլինգը կարող է սթրես կամ վնաս պատճառել թիրախավորված անձին, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինչպես նաև կրթական վնաս:

Ըստ շվեդ-նորվեգացի հոգեբան Օլվեուսի՝ **<<Բուլինգը որևէ երեխայի ուղղված մեկ կամ մի քանի երեխաների կողմից երկարատև կանխամտածված հալածանքն է>>:** Հալածանքը ներառում է ֆիզիկական, հոգեբանական կամ երկուսը միասին

բռնությունը և մեկուսացումը, ընդ որում ՝ հալածողի և հալածվողի միջև հարաբերությունները միշտ անհավասար են:

Պրոֆեսոր Քեն Ռիգբին առանձնացրել է բուլինգի փուլերը և բաղադրիչները՝ որևէ մեկին ցավ պատճառելու ցանկություն, ցավ պատճառելու գործողություն, ուժի անհավասարություն, կրկնություն, ուժի անարդարացի կիրառում, հալածողի կողմից ակնհայտ հրճվանք, իսկ հալածվողի մոտ՝ ընկճվածություն:

Բուլինգը ունի իր առանձնահատկությունները՝

1. *ՈՒժերի անհավասար բաշխում*
2. *Բռնության կրկնվող բնույթ*
3. *Բուլինգի ենթարկվողի սուր էմոցիոնալ արձագանք*

Երեխաների կողմից դրսևորվող ոչ բոլոր ագրեսիվ վարքագծերն են, որ կարող են բուլինգ համարվել: Ագրեսիվ վարքագծի և բուլինգի միջև առկա են տարբերություններ:Բուլինգ իրականացնող երեխաները հաճախ ունենում են ընկերոջը նվաստացնելու հստակ մտադրություն: Ի տարբերություն նրանց՝ ագրեսիվ երեխաները, հաճախ նմանատիպ վարքագիծ են դրսևորում, երբ խիստ զայրացած են և չեն կարող վերահսկել սեփական վարքը:

Բուլինգի ենթարկվող անձը համարվում է բուլինգի զոհ, իսկ բուլինգի ենթարկող անձը՝ բուլեր: Եթե դուք ինքներդ բուլինգի եք ենթարկվել կամ գիտեք մեկ այլ մարդու, ով դարձել է բուլինգի զոհ ապա պետք է իմանաք, որ կան այդ իրավիճակից դուրս գալու ուղիներ, ինչպես նաև աջակցության և օժանդակության ծառայություններ:

Բուլինգը կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի բուլինգը կարող է դրսևորվել *ֆիզիկական* ագրեսիայի ձևով ՝ հարվածել, հրել, գողանալ, վնասել իրերը, կամ *խոսքային* ագրեսիայի ձևով՝ անընդհատ բարկացնել, վիրավորել, վախեցնել, սպառնալ և այլն:ՈՒղղակի բուլինգը հիմնականում բնորոշ է տղաներին : Ուղղակի բուլինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, երբեմն էլ միջին դպրոցի երեխաների մոտ:

Անուղղակի բուլինգի դեպքում բուլինգի զոհին կանխամտածված մեկուսացնում են իր միջավայրից: Անուղղակի բուլինգը ավելի բնորոշ է աղջիկներին: Հանդիպում է արդեն ավելի հասուն տարիքում՝ միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը, և՛ անուղղակի, և՛ ուղղակի բուլինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության:Երեխաների դեպքում հատկապես դեռահասության շրջանում (միջին դեռահասության տարիք) դպրոցական բուլինգը առավել վտանգավոր է, որովհետև այդ տարիքում մարդը փնտրում է իր ճանապարհը, ինքն իրեն ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է լինել նրա վստահության, որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը:

Բուլինգը կարող է սթրես կամ վնաս պատճառել թիրախավորված անձին, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինչպես նաև՝ կրթական վնաս:

1.2 *Բուլինգի տեսակները և դրսևորումները*

- Խոսքային բուլինգը անձի թիրախավորումն է խոսքի միջոցով: Այս տեսակի բուլինգի ժամանակ բռնարարի կողմից կիրառվում են ծաղրանքներ, վիրավորանքներ,անհարկի բառեր և արտահայտություններ, զոհին վախեցնելու և նրան հուզական և հոգեկան վնաս հասցնելու համար: Երեխաները, ովքեր դպրոցում այսպիսի բուլինգի են ենթարկվում, բնութագրվում են զայրանալով, անտարբերությամբ, ախորժակի բացակայությամբ: Այս տեսակը դպրոցներում բավականին տարածված տեսակ է:
- Սոցիալ-հոգեբանական բուլինգը ներառում է սպառնացող թշնամական հայածքներ, մանիպուլացիաներ,բամբասանքի տարածում, հալածվող երեխայի հետ այլ երեխաներին չշփվելու պարտադրանք, մեկուսացում, սադրանք,անտեսում, համատեղ գործունեության ձևերում տարեկիցների ներգրավվածության խոչընդոտում, որոնք նսեմացնում են աշակերտի արժանապատվությունը և բացասաբար ազդում նրա հոգեբանության վրա:
- Տնտեսական բուլինգը ներառում է շորթում, գողություն, ունեցվածքի փչացում կամ ոչնչացում, օրինակ հագուստի, պայուսակի վրա գրառումներ անելը, մեծահասակ աշակերտները, ավելի փոքր դասարանցիներից որոշակի գումար են շորթում:
- Ֆիզիկական բուլինգը ներառում է հրում, հարվածում, վայր գցում, ցավեցնում, ֆիզիկական ազատության սահմանափակում, կապտուկներ, մազերը քաշել կամ կտրել, եթե կրում են շարունակական բնույթ, կարող ենք ասել, որ երեխան ենթարկվում է ֆիզիկական բուլինգի: Ֆիզիկական բուլինգը կարող է շատ լուրջ հետևանքներ ունենալ աշակերտի կյանքի և բարօրության վրա:
- Սեռական բուլինգը սեռական նշանակության ոտնձգության տեսակ է: Թիրախավորելով
- Կիբեռբուլինգի տեսակներ են՝

- *Հեյթինգ*
- *Թռոլինգ*
- *Կիբերսթալքինգ*
- *Արհամարանք, մերժում*
- *Սեքսթինգ*
- *Ֆեյք էջերի ստեղծում, էջերի կոտրում*

Կիբեռբուլինգը շրջանառության մեջ է մտել 1997 թվականից: Կրբեռբուլինգը նույն հալածանքն է, բայց արդեն համակարգչի, բջջային հեռախոսի, սոցիալական ցանցերի միջոցով:Օրինակ՝ սոցիալական ցանցում ատելության խոսքը,վատ մեկնաբանությունները, լուսանկարի տարածումը: Այս ձևը, ինչպես բուլինգի դրսևորման ցանկացած ձև, ուղված է անձին նվաստացնելու, հոգեբանական ճնշման ենթարկելու, հետապնդելու, ահաբեկելու: Կիբեռբուլինգն ամենավտանգավորն և ամենաերիտասարդն է, որն առավել վտանգավոր է հաղթահարման և կանխարգելման տեսանկյունից: Այն տարբերվում է բուլինգի այլ տեսակներից, քանի որ անձի մասին

տվյալների հանրայնացումը կամ կեղծ տեղեկատվության տարածումը ավելի մեծ լսարան կարող է ունենալ: Եթե բուլինգի ժամանակ երեխան մի քանի ժամ դպրոցում անցկացնելուց հետո վերադառնում է տուն, ապա կիբեռբուլինգը դժվար է վերահսկել, քանի որ այն կարող է տեղի ունենալ անանուն, անընդմեջ և օրվա ցանկացած ժամի:Սովորաբար, եթե դպրոցում(դասարանում) կա բուլինգ, դա տեղափոխվում է կիբեռ տարածք:

Կիբեռբուլինգը ունի երեք սկզբունք

- **A**nonymous
- Գաղտնիություն
- **A**ccessible
- Հասանելիություն
- **A**ffordable
- Ցածր արժեք

Բուլինգի 3 մասնակիցներ



1.3 Բուլինգի ենթարկող (հալածող) երեխաների բնութագիրը

Բռնության հակված երեխաները սովորաբար ունենում են հետևյալ բնութագրիչները՝

- ագրեսիվ են(ուսուցիչների,ծնողների, ինչպես նաև այլ երեխաների հանդեպ)
- ցածր կամ բարձր ինքնագնահատական
- ցուցադրականություն
- դոմինանտելու հակում
- բռնկվող են, դյուրագրգիռ
- խնդիրներ ընտանիքում
- զուրկ են կարեկցելու կարողությունից

- կարծում են շրջապատող աշխարհը վտանգավոր է, ոչ բարյացակամ
- տարեկիցներից ֆիզիկապես ուժեղ են(տղաներ)
- տարեկիցների շրջանում միջին կամ էլ միջինից պակաս համակրանք են վայելում
- երեխաներ, որոնք ձգտում են լինել ուշադրության կենտրոնում

Տարբեր հետազոտողների կողմից իրականացրած երկարատև ուսումնասիրությունները փաստում են, որ պատանեկության ավարտին բուլինգ իրականացնողների 60%-ն մեղադրվում է քրեական զանցանքի կամ այլ օրինախախտման համար, իսկ 40%-ն արդեն դարձած են լինում կրկնակի օրինազանցներ: Նման մտահոգիչ վիճակագրությունն առավել ընդգծում է բուլինգի դեմ որքան հնարավոր է վաղ պայքարելու կարևորությունը:

Կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են երեխաների մոտ բռնության դրսևորմանը: Բացահայտվել է, որ մայրական դեպրիվացիայի պայմաններում դաստիրակված երեխաները(ովքեր մանկական տարիքում բավականաչափ սեր, խնամք չեն տեսել՝,<<սոցիալական որբեր>>, մանկատան երեխաներ) հետագայում ավելի հակված են եղել բռնության, քան նորմալ ընտանիքներում դաստիարակված երեխաները:

Բուլերները հիմնականում մեծանում են այն ընտանիքներում, որտեղ գործածվում են ֆիզիկական պատիժներ, և այն ընտանիքներում, որտեղ դաստիարակում են, երեխաներին այնպես, որ նրանք մտածեն թե յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել ուժի, բռնության միջոցով :

Ինչպես նշվեց, բուլինգ իրականացնելուն հակված երեխաները սովորաբար ագրեսիվ են նաև մեծահասակների հանդեպ: Ըստ Օլվեուսի՝ նման երեխաները հաճախ մեծանում են այնպիսի ընտանիքներում, որոնցում առկա չեն ջերմ հուզական փոփոխությունները(հատկապես վաղ մանկության շրջանում): Սա բնավ չի նշանակում, որ այս երեխաները անտեսված են եղել, նրանք կարող են ստանալ լավ կրթություն, բավարար սնունդ, խնամք և նյութական արժեքներ, սակայն ծնողները բավականաչափ ուշադրություն չդարձնեն երեխաների հուզական զգացմունքային կարիքների բավարարմանը: Բուլինգ իրականացնող երեխաների ծնողները սովորաբար սահմանապակումներ չեն կիրառում, պահանջկոտ չեն, հանդուրժող են իրենց երեխաների ագրեսիվ վարքագծի հանդեպ, հետևողական չեն վերաբերվում երեխաների դաստիարակության խնդիրներին և պահանջկոտ ու նրբանկատ չեն նրանց նկատմամբ կիրառվող կարգապահական մոտեցումներում: Որոշ դեպքերում նման երեխաների ծնողներն իրենք են ագրեսիվ արձագանքում երեխեների կողմից իրենց իսկ սահմանած կանոնների խախտումներին: Երբ ծնողն իր երեխային մեծարում է, նրան ասում, որ ամենալավն է, ունի շատ ավելի արժանիքներ, քան այլ երեխաներ: Հենց սա էլ երեխայի մեջ սերմանում է մեծամտություն և փակում նրա աչքերը, որ չտեսնի իրականությունը և չցանկանա հավատալ, որ որևէ մեկը ինչ-որ

բանում նրանից առաջ է անցել: Ցավոք, սա բարդ ուղղելի գործընթաց է, սակայն ավելի սարսափելի են այս «մոլախոտի» պատճառով կատարվող գործողությունները, հատկապես բուլինգը:Դիտարկենք սովորական դեպք, որտեղ գլխավոր հերոսը տղան է: Փոքր տարիքում ծնողական մեծարանքի արժանացած երեխան ծաղրում է աշխատասեր աշակերտներին, ովքեր ստանում են բարձր գնահատական: Պատանեկան տարիքում այդ նույն երեխան կնախանձի այլոց, ովքեր ավելի խելացի են կամ աղջիկների շրջանում աչքի ընկնող: Այս երկու դեպքում էլ նա ծաղրում է նրանց, փորձում զգալ իրեն ավելի բարձր: Ինչպես երևում է, ծնողների՝ իրենց երեխայով հպարտանալը, կարող է բերել այդ երեխայի մեջ որակի զգացողության կորստի, երեխան կդադարի հասկանալ և համեմատել իր և մյուսների աշխատանքի որակը և միայն կհենվի իր ենթագիտակցության վրա, որում սերմանված է, որ նա ամենալավն է ամեն ինչում:

ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ բուլինգ իրականացնելու հակված երեխաների որոշ հատկանիշներ բնածին են: Օրինակ արագ բռնկվող են, իմպուլսիվ, սակայն որոշ որակներ նրանք ձեռք են բերում դաստիարակության արդյունքում՝ կարեկցելու ցածր մակարդակ, ուրիշներին ճնշելու, դոմինանտ լինելու արտահայտված կարիք, աշխարհի՝ թշնամական լինելու մասին թյուր պատկերացումներ: Նման երեխաների վարքը շրջապատի կողմից վրդովմունքի և ագրեսիվ արձագանքի է արժանանում, սակայն նույնիսկ զգալով իրենց ուժն ու դոմինանտությունը՝ նրանք երջանիկ չեն լինում և մեծահասակների աջակցության կարիքն են ունենում: Կարևոր է, որ այս երեխաները սովորեն վերահսկել հուզական պոռթկումները և ունենան ապրումակցման կարողություն, ինչը հնարավոր չէ, եթե նրանց շրջապատողները հենց իրենք ապրումակցող չլինեն: Ագրեսիվ վարքագիծ ունեցող երեխաներին պատժելը կամ նվաստացնելը որևէ արդյունքի չի հանգեցնի:

Բուլինգի պատճառներից մեկը իրականացնող երեխաների մեջ այլոց ապրումակցելու և կարեկցելու կարողությունների անբավարարվածությունն է կամ բացակայությունը:Այդ իրավիճակի հաղթահարման համար առաջին հերթին անհրաժեշտ է երեխայի միջավայրում սահմանել հստակ ու արդար կանոններ և դրական վերաբերմունքով ու վարքագծով ապացուցել, որ աշխարհը կարող է լինել անվտանգ ու ընկերական, փոխադարձ հարգանքի վրա կառուցված փոխհարաբերություններով: Անշուշտ, բուլինգ իրականացնող երեխաների հետ աշխատանքը պետք է իրականացվի նրանց ծնողների հետ համագործակցելով:

Գոյություն ունի երեխաների մի խումբ, որոնք թե՛ բուլինգ իրականացնող են, թե՛ բուլինգի թիրախ: Որպես կանոն, նման երեխաները բուլինգի են ենթարկվում իրենցից ավելի ուժեղ տարեկիցների կողմից, և ի պատասխան դրա՝ իրենք էլ հալածում են իրենցից ավելի թույլ երեխաներին կամ բռնությանը հակված երեխաներին հրահրում են հալածել իրենցից թույլերին: Այս երեխաները ավելի վտանգավոր խմբում են: Որպես զոհեր նրանք տառապում են սոցիալապես ընդունված չլինելու և ցածր ինքնագնահատականի պատճառով, միժամանակ, որպես բուլինգ իրականացնողներ՝ նրանք գիտակցում են, որ իրենց վարքագիծն անվերահսկելի է և անընդունելի: Այս

երեխաները սովորաբար նաև լավ չեն սովորում և բնութագրվում են որպես <<վատ>> աշակերտներ: Նրանց անհրաժեշտ է աջակցել՝ զարգացնելով թե՛ հալածվողի, թե՛ հալածողի մեջ բացակայող որակներն ու սոցիալական հմտությունները:

Այն վարկածը, որ բուլիգը պայմանավորված է ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմաններով (եկամուտ, ծնողների կրթվածություն, կենսական պայմաններ և այլն), դպրոցով և բնակավայրերով ըստ Օլվեուսի փորձարարության տվյալների՝ չի հաստատվել:

1.4 Դպրոցական բուլինգի զոհերի բնութագիրը

Օլվեուսը նկարագրել է, թե ինչպիսի անձնային որակներն են, որոնք որոշ երեխաների կարող են բուլինգի ավելի հավանական թիրախ դարձնել:

Չնայած այն հանգամանքին ,որ բուլինգի կարող է ենթարկվել ցանկացած սովորող,այնուամենայնիվ կան սովորողներ,ովքեր գտնվում են ռիսկային գոտում:

- երկչոտություն, անվստահություն
- զգուշավորություն, մտահոգվածություն,զգայնություն, մեղմություն
- շփումներից խուսափողանականություն, պասիվություն, լացկանություն
- ցածր ինքնագնահատական
- ընկերների բացակայություն
- գերպաշտպանվածություն ծնողների կողմից
- ոչ ագրեսիվություն(որոշ բացառությամբ)
- ֆիզիկապես թուլություն (հատկապես՝ տղաները)
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ(ուսումնական դժվարություններ, աուտիզմ, ուշադրության պակաս և գերակտիվություն, առողջական խնդիր)
- ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաներ
- ֆիզիկական/կառուցվածքային խնդիրներ ունեցող երեխաներ(մարմնի կառուցվածք, ֆիզիկական խնդիրներ)

Նշված որոշ որակներ բնածին են (զգացմունքայնություն,ամաչկոտություն, ինքնամփոփություն), մինչդեռ մյուսները ձևավորվում են երեխայի

դաստիարակության ընթացքում: Սովորաբար մեծահասակների գերպաշտպանության ներքո գտնվող երեխաները կարծում են, որ իրենք չեն կարող պաշտպանել սեփական անձն ու ունեցվածքը, հույսը դնում են մեծահասակների վրա, որոնք մշտապես պաշտպանում են իրենց և հոգում նրանց բոլոր կարիքները: Արդյունքում չեն ձևավորվում այդ երեխաների ինքնապաշտպանության և պայքարելու կարողությունները: Նման դեպքում ծնողները անմիջապես արձագանքում են երեխայի խնդիրներին կամ կարիքներին՝ նույնիսկ չսպասելով, որ վերջիններս իրենք օգնության դիմեն: Այսպիսի վերաբերմունքով ծնողները երեխաների մեջ ստեղծում են տպավորություն, որ իրենք չեն կարող հոգալ սեփական կարիքները և կարգավորել միջավայրի հետ իրենց հարաբերությունները:Նման վարքագիծ դրսևորող ծնողները հնարավորություն չեն տալիս երեխաներին սովորելու, թե ինչպես պետք է հաղթահարել դժվարությունները և ընդունել մարտահրավերները: Չնայած այս ամենի հիմքում ընկած են ծնողական սերն ու հոգատարությունը, սակայն այն հանգեցնում է երեխաների անինքնավստահության ձևավորմանը:Հայտնվելով տարբեր խնդրահարույց իրավիճակներում՝ նման երեխաները նահանջում են՝ ակնկալելով մեծերի աջակցությունը: Տարեկիցների հետ դրական փոխհարաբերություններ կառուցելու և ընկերներ գտնելու փոխարեն նրանք նախընտրում են ժամանակն անցկացնել մեծահասակների հետ: Արտահայված հուզականության, տարեկիցների միջավայրում հարմարավետ չզգալու և ընկերներ չունենալու հետևանքով այս երեխաները հաճախ ունենում են ոչ համարժեք, հիմնականում ցածր ինքնագնահատական, տարեկիցների կողմից չնդունված լինելու զգացողություն: Բուլինգի զոհ դարձածները հիմնականում լինում են ոչ ապահովված ընտանիքներից, երբեմն նաև ծնողազուրկ, քանի որ նման մարդկանց վիրավորելը շատ ավելի դյուրին է: Բուլինգի զոհ դարձածները հիմնականում ներփակված են լինում իրենց մեջ, չեն կիսվում ոչ ոքի հետ, և կարծում են, որ դա ամենաճիշտ լուծումն է: Բուլիինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը տխուր, ոչ ապահով վայր: Ըստ հետազոտության արդյունքների ութերորդ դասարանի ամերիկացի աշակերտների 7% մնում է տանը ամսական մեկ անգամ, քանի որ վախենում է բուլինգի զոհ դառնալուց: Բուլինգի զոհ դարձած մարդիկ ունենում են վատ և տհաճ զգացողություններ, նրանք ունենում են ամոթի, վախի զգացում, դառնում են դյուրագրգիռ, մտածում են, որ իրենք շատ վատն են, ունենում են շատ ցածր ինքնագնահատական, և գնալով վերանում է նրանց մեջ ինքնահաստատվածությունը, նրանք չեն ցանկանում հաճախել դպրոց, սկսում են խուսափել հասարակական վայրերից, չեն հաճախում երեկույթների,

սկսում են մեկուսանալ հասարակությունից, ներփակվում են իրենց մեջ, որը կարող է հանգեցնել հոգեկան շեղումների, և այս ամենից ազատվելու միակ ուղին, ցավոք, նրանք գտնում են ինքնասպանության մեջ:

Բուլինգի ենթարկված երեխաների երկարատև հետազոտությունների արդյունքները փաստել են, որ տարեկիցների հետ փոխհարաբերությունների որոշ խնդիրներ կարող են կարգավորվել պատանեկության ավարտին, սակայն ցածր ինքնագնահատականը և ընկճված հոգեվիճակը կարող են պահպանվել: Նման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրանց սոցիալականացման կարողությունների զարգացմանը, ինքնագնահատականի կարգավորմանը և ինքնավստահության բարձրացմանը: Այս խնդիրները անհնար է լուծել առանց ծնողների հետ համագործակցության:Հաճախ նման իրավիճակներում հայտնված երեխաները կարծում են, որ իրենց հանդեպ իրականացվող բուլինգն արդարացված է, իրենք արժանի են նման վերաբերմունքի: Նման ընկալումը և սեփական անձի հանդեպ վերաբերմունքը այս երեխաների համար թիրախ է դարձնում միջավայրի համար այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ոչ միայն կարծում են, որ իրենք արժանի են դրան, այլև նույնիսկ ծայրահեղ իրավիճակներում չեն կարողանում արդարանալ, պաշտպանել իրենց:

Ականատես

Ականատեսը այն անձն է , ով կարող է պաշտպանել զոհին, սակայն հազվադեպ է լինում, որ պաշտպանում է: Ականատեսն ունի ամբիվալենտ զգացողություն. մի կողմից մեղքի զգացում, մյուս կողմից՝ վախ, որ ինքը նույնպես կարող է դառնալ բուլինգի զոհ:Մեկ այլ դեպքում լուռ հետևում է գործընթացին: Ականատեսը կարող է շատ մեծ համակրանք զգա ագրեսորի նկատմամբ և խրախուսի նրա քայլերը: Բուլինգի դեպքերի ականատես լինելիս ուսուցիչները միջամտում են և լուծումներ են գտնում: Լինում են դպրոցում դեպքեր, երբ թաքցվել ու կոծկվել է բուլինգը ուսուցիչների և տնօրենի կողմից: Դա արվում է դպրոցի համբավը «չփչացնելու» համար: Աշակերտների 30% -ը փորձում է չմիջամտել, վախենալով ինքն էլ զոհ կդառնա: 40% -ը միջամտում են, դրանք այն աշակերտներն են, ովքեր դիրք ու հեղինակություն ունեն դպրոցում ու դասարանում և չեն վախենում ոչնչից: Աշակերտների մոտ 30 %-ը ակտիվ կամ պասիվ ձևով միանում է ագրեսորին և սկսում ծաղրել բուլերին: Դա տեղի է ունենում երկու ձևով՝ ակտիվ և պասիվ: Ակտիվ մասնակցության դեպքում իրենք ևս

սկսում են բուլինգ իրականացնել թիրախավորված աշակերտի հանդեպ: Պասիվ մասնակցության դեպքում կարող են ծաղրական կատակների վրա ծիծաղել, եթե բուլինգի զոհը օտարվել է, նրա կողքին չեն նստում, և այլն:

Գլուխ 2 . Բուլինգի պատճառները

Ուսումնասիրելով բուլինգն ամբողջությամբ, կարող ենք առանձնացնել չորս միջավայր, որոնք պարարտ հող կարող են հանդիսանալ բուլինգի շարունակման և ձևավորման համար:

1. Ընտանիք
2. Անձ
3. Դպրոց
4. Սոցիում

1. Անառողջ ընտանեկան մթնոլորտում մեծանում են խեղված մտահորիզոնով և ոչ զարգացած կամ թերզարգացած ներաշխարհով երեխաներ, ովքեր էլ վաղվա հասարակության այն շերտն են կազմում, որը վնասում է հասակակիցներին և ոչ միայն, թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեբանորեն ենթարկելով բուլինգի:

Ցածր գիտակցական մակարդակ և կամ չարդարացված բարձր ինքնագնահատական ունեցող ծնողները, երբևէ ուսուցչի կամ այլ անձի նկատառումը երեխայի վարքի հետ կապված, չեն ընդունում, կարծելով թե իրենց երեխան անսխալ է: Այս երևույթը երեխայի մոտ մեծամտության դրսևորման սկիզբ է հանդիսանում:

2.Բուլինգ իրականացնող երեխաների միջ այլոց ապրումակցելու և կարեկցելու կարողությունների անբավարարությունն կամ բացակայությունն է: Այս իրավիճակի հաղթահարման համար առաջին հերթին անհրաժեշտ է երեխայի միջավայրում սահմանել հստակ ու արդար կանոններ և դրական վերաբերմունքով ու վարքագծով ապացուցել, որ աշխարհը կարող է լինել անվտանգ ու ընկերական, փոխադարձ հարգանքի վրա կառուցված փոխհարաբերություններով:

3.Դպրոցում բուլինգի պատճառ կարող են հանդիսանալ նաև մանկավարժական ոչ ճիշտ մոտեցումը՝ վիրավորանքը, կոպիտ վերաբերմունքը, չնկատելով, որ կարող է աշակերտների կողմից ընկալվել որպես բուլինգի իրականացման թույլտվություն: Այս առումով շատ կարևոր է, թե ինչպես է տնօրինությունը կազմակերպում տարբեր բաժինների աշխատանքը, արդյո՞ք կա ճիշտ հետևողականություն:

Բուլինգ երևույթի առկայության դեպքում կարևոր է ուսուցիչների համագործակցությունը միմյանց հետ: Ամենակարևորը դասղեկի ազդեցությունն է, եթե դասղեկը արհամարհում է ընդհանուր խմբի ծաղրանքը մեկ աշակերտի նկատմամբ, ապա դա շարունակում է ավելի խորը արմատներ տալ և ավելի վնասել սոցիալական միջավարը: Այնպես որ, աշխատանքի առյուծի բաժինն այստեղ դասղեկինն է:

4.Այսօր սոցիումին անրադառնալը ամենառաջնային հարցերից է: Ապացուցված է, որ լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերը նույնպես ազդում են երեխաների շրջանում բուլինգի դրսևորման հաճախականության և հավանականության վրա: Մեդիադաշտում առկա բացասական տեղեկությունը, բռնության տարրեր պարունակող կինոնկարները, մուլտֆիլմերն ու համակարգչային խաղերը երբեմն դրականորեն ներկայացնելով բռնությունը ՝ ձևավորում են ագրեսիվ վարքագիծ և ինչն առավել կարևոր է, չեն արթնացնում կարեկցանք և զգայունություն բռնության դրսևումների նկատմամբ: Բռնություն քարոզող և բռնությունը սատարող սոցիալական դրսևորումները զգալիորեն նպաստում են բուլինգի հաճախակի և դաժան դրսևորումներին:

2.1 Բուլինգի հետևանքները

Դպրոցական բռնությունը երեխաների վրա ներգործում է ուղիղ և միջնորդավորված կերպով:

Առաջին հերթին, խանգարվում են ընկերային հարաբերությունները՝ դպրոցական երկարատև ծաղրուծանակները ներգործում են երեխայի **Ես**-պատկերի վրա, իջնում է նրա ինքնագնահատականը: Երեխան սկսում է խուսափել մարդկանց հետ նոր հարաբերություններ կառուցելուց: Հաճախ պատահում է նաև հակառակը՝ մյուս երեխաները ևս խուսափում են բռնության զոհերի հետ ընկերություն անելուց. նրանք վախենում են, որ իրենք էլ զոհ կդառնան: Արդյունքում զոհի համար ընկերական հարաբերությունների ձևավորումը խնդրահարույց է դառնում, քանի որ դպրոցում մերժված լինելը հաճախ տարածվում է նաև սոցիալական հարաբերությունների այլ ոլորտների վրա: Չի բացառվում, որ նման երեխան հետագայում ապրի <<անհաջողակի ծրագրավորմամբ>>:

Երկրորդ զոհը խմբում ցածր կարգավիճակ է ունենում, ինչը ուսման մեջ և վարքագծում խնդիրների պատճառ է հանդիսանում: Նման երեխաների մոտ բարձր է նյարդահոգեկան և վարքային խանգարումների զարգացման հավանականությունը:

Դպրոցական բռնության զոհերին բնութագրական են նևրոտիկ խանգարումները, ընկճախտը, քնի և ախորժակի խանգարումները: Վատթարագույն դեպքում կարող է ձևավորվել հետտրավմատիկ սթրեսային խանգարում:

Երրորդ - դեռահասների մոտ դպրոցական բռնությունն առաջացնում է նույնականության խանգարումներ: Երկարատև սթրեսը ծնում է հուսահատության և անելանելիության զգացում, ինչը կարող է սուիցիդային մտքերի պատճառ հանդիսանալ:

Բուլինգի ազդեցությունը 3 մասնակիցների վրա

- Ագրեսոր-դեստրուկտիվ վարք
- Ականատես-ամբիվալենտ զգացողություններ
- Զոհ –հոգեբանական տրավմաներ

Դպրոցում երեխաների նկատմամբ կիրառվող յուրաքանչյուր բռնություն անկախ այն կիրառող սուբյեկտից, ունենում է իր հետևանքները թե՛ տուժողի, թե՛ բռնություն կիրառողի, թե՛ ականատեսների, թե՛ կրթական հաստատության համար:

Գլուխ 3. Բուլինգի կանխարգելման արդյունավետ և ոչ արդյունավետ մեթոդները

3.1Բուլինգի կանխարգելման և արձագանքի սխալ եղանակները

Անհանդուրժողականություն բուլինգին

Այն նաև կոչվում է <<Սովորողների հեռացման >>քաղաքականություն: Խնդիրը այն է, որ բուլինգը կարող է լինել այլ խնդիրների վաղ ազդանշան: Բուլինգի ենթարկող սովորողները կարիք ունեն սոցիալական մոդելի:

Դպրոցի անվտանգությունը կարող է պահանջել, որպեսզի բուլինգի ենթարկողը հեռացվի դպրոցական միջավայրից, սակայն այս գործընթացը պետք է իրականացնել շատ հազվադեպ:

Կոնֆլիկտի լուծում և հասակակիցների միջնորդություն

✓ Հաճախ փորձում են խնդիրները հաղթահարել հասակակիցների միջոցով, բայց բուլինգի ժամանակ միջնորդությունը ունի հակառակ ազդեցություն: Բուլինգի միջնորդությունը կարող է սխալ հասկացվել ներառված աշակերտների կողմից:Միջնորդությունը կարող է ավելի խորացնել կամ վնասել բուլինգի ենթարկվող երեխայի հոգեվիճակը:

Խմբային թերապևտիկ ազդեցությունը բուլինգի ենթարկող սովորողներն:Խնդիրները.

-Կարող է ներառել զայրութի կառավարում, կարողությունների զարգացում, կարեկցանքի ձևավորում, ինքնագնահատականի բարձրացում:

-Միջնորդությունը կարող է ավելի խորացնել կամ վնասել բուլինգի ենթարկվող սովորողի հոգեվիճակը:

Այն ունի լավ մտադրություն, սակայն հաճախ ստացվում է հակառակը.

-Խմբի անդամները միմյանց համար կարող են ծառայել որպես վատ վարքի մոդելներ և ամրապնդել միմյանց հակասոցիալական վարքագիծը:

Պարզ, կարճաժամկետ լուծումներ

✓ Հաճախ աշխատակիցները ընտրում են խնդրի մասնակի և կարճաժամկետ լուծումներ:

3.2 Բուլինգի կանխարգելման և արձագանքի լավագույն փորձերը

Մասնագետները կարծում են, որ դպրոցական միջավայրում բուլինգի կանխարգելմանն ուղղված ծրագրերն առավել արդյունավետ են վաղ տարիքային խմբերում՝ տարրական և միջին դպրոցում, քանի որ հետազոտությունները ցույց են տվել, որ երեխաների հասունանալուն զուգընթաց՝ նվազում է վարքագծի և արժեհամակարգի մեջ դրական փոփոխությունների իրականացման հնարավորությունները:

Բուլինգի կանխարգելման, դպրոցում առկա հալածանքի իրավիճակների հաղթահարման համար կարևոր է կրթական միջավայրում այնպիսի արժեհամակարգի ձևավորում, որը կնպաստի բուլինգը որպես սխալ և անընդունելի վարքաձև համոզմունքի ձևավորմանը: Բուլինգի արձագանքելն ու այն կանխելը կարևոր նակապայման է հատկապես խոցելի խմբի երեխաների հետ աշխատելու տեսակետից: Կարևորն այն է, որ հալածվող երեխաներին պաշտպանելը կամ նրանց մասին հոգալը ոչ թե դիտվի խնդրի լուծում, (հաճախ հենց գերհոգացությունն է հալածվողի դերում հայտնվելու պատճառ հանդիսանում), այլ իրականացվի բուլինգի ենթարկվող

երեխաների սոցիալականացման կարողությունների զարգացման, համարժեք ինքնագնահատականի ձևավորման և սեփական ուժերին վստահելուն ուղղված մանկավարժահոգեբանական աշխատանքներ: Բնականաբար սա երկարատև և քայլ առ քայլ ընթացող գործընթաց է, սակայն միայն այս դեպքում է, որ ներդրված ջանքերը կարող են արդյունավետ լինել:Ի տարբերություն այսպիսի մոտեցման՝ սովորաբար բուլինգի ենթարկվող երեխաներին ծնողների ցուցաբերած արձագանը հաճախ միայն լինում է հալածվող երեխային պաշտպանելը և հալածողին պատժելու պահանջ ներկայացնելը, սակայն ինչպես նշվեց, պաշտպանությունն ու պատսպարումը միայն խնդրի ժամանակավոր լուծում են և չեն օգնում հալածվողին:Բուլինգը կանխելու կամ դադարեցնելուց հետո շատ կարևոր է օգնել երեխային՝ ձեռք բերելու այնպիսի կարողություններ և անձնային որակներ, որոնք թույլ կտան նրան հետագայում նմանատիպ իրավիճակում հայտնվելիս ճիշտ վարքաձև դրսևորել կամ տարեկիցների միջավայրում այնպես ներկայանալ, որ հալածանքի ենթարկվելու առիթներ չլինեն:

Բուլինգի կանխարգելման լավագույն փորձերը

1.Համայնքում իրականացնել բուլինգի առավել խոր գնահատում

- ✓ հավաքել տեղեկություններ բուլինգի, սոցիալական կլիմայի և սովորողների շրջանում բռնությունների աստիճանի վերաբերյալ

<<Բուլինգի հաղթահարումը միայն դպրոցի խնդիրը չէ. Այն համայնքի բոլոր սոցիալական և կրթական դեր ունեցող կառույցների պատասխանատվությունն է>>

Համակարգել և ամբողջացնել կանխարգելման ջանքերը

- ✓ Բուլինգի կանխարգելումը պետք է համակարգված և ամբողջացված լինի հարակից այլ ջանքերի հետ
- ✓ Համարգող խումբը կամ հանձնաժողովը կտեղեկացնի համակարգման, ամբողջացման կամ ռազմավարությունների ընդունման վերաբերյալ որոշումները
- ✓ Դպրոցում գործող թիմերը պետք է ներկայացնեն իրենց անձնակազմը, որտեղ նաև պետք է ներառված լինեն ծնողները և աշակերտական խորհուրդը
- ✓ Համայնքային խմբերի ձևավորումը թույլ կտա գրանցելու մեծ հաջողություններ

Ապահովել դասընթացներ բուլինգի կանխարգելման ազդեցության վերաբերյալ

Մեծահասակները պետք է հասկանան

- ✓ Բուլինգի առանձնահատկությունները

- ✓ Դրա ազդեցությունը
- ✓ Մեծահասակների վերահսկողության կարևորությունը
- ✓ Համապատասխանաբար արձագանքել, եթե նկատվում է բուլինգ

Կազմակերպել համայնքային միջոցառումներ կանխարգելման ջանքերը խթանելու համար

- ✓ Բուլինգի կանխարգելման և իրազեկման ջանքերի հաջողությունը պահանջում է համայնքի շահագրգիռ կողմերի աջակցությունը
- ✓ Համայնքային միջոցառումների կազմակերպումը կարևոր քայլ կլինի ձեր նախաձեռնության համար
- ✓ Միջոցառումների ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերը կհանդիպեն մեկ վայրում և կկարողանան մշակել ռազմավարություններ, որոնք հետագայում կվերածվեն գործողությունների

Սահմանել բուլինգը և մշակել կանոններ

- ✓ Որոշ երկրներում օրենքը պահանջում է, որ հանրակրթական դպրոցներում մշակվեն հակաբուլինգային ռազմավարություններ:

  Դպրոցի անձնակազմը պետք է ստեղծի և պարզաբանի հստակ կանոններ բուլինգյան վարքի և ակնկալիքների վերաբերյալ, եթե դպրոցում նկատվում է բուլիգի երևույթը: Կիրառի համապատասխան մեթոդներ այլ սովորողներին բուլինգից պաշտպանելու համար:

  Երբ նկատվում է բուլինգ, պետք է արձագանքել համապատասխան և հետևողական: Պետք է առանձնացնել ներգրավված երեխաներին, վստահ լինել, որ բոլոր երեխաները ապահով են, անհապաղ լուծել բժշկական, հոգեկան առողջության կարիքները, հանգիստ լինել, հանգստացնել ներգրավված երեխային, ինչպես նաև ականատեսներին, միջամտության դեպքում ցուցաբերել հարգալից վերաբերմունք, անհրաժեշտության դեպքում պետք է ներգրավվել ծնողներն:

Չի կարելի

- ✓ Անտեսել այն, մտածել, որ երեխաները կարող են այդ ամենը լուծել առանց մեծահասակների աջակցության
- ✓ Անհապաղ պարզաբանել փաստերը
- ✓ Հարցնել ներգրավված երեխաներն, այլ երեխաների ներկայությամբ
- ✓ Պահանջել, որ այլ երեխաները պատմեն թե ինչ է կատարվել
- ✓ Ստիպել ներգրավված երեխաներին միմյանցից ներողություն խնդրել կամ կատարել պարզաբանումներ բոլորի ներկայությամբ

- ✓ Կատարել խմբային պարզաբանումներ
- ✓ Ժամանակ տրամադրել երեխաների և մեծահասակների հետ խոսելու բուլինգի մասին
- ✓ Անցկացնել դասղեկական ժամեր և հանդիպումներ անձնակազմի համար
- ✓ Ներառել բուլինգի, դրական վարքագծի և սոցիալ-հուզական երևույթների մասին դասեր և պետք է այն ամրագրել դպրոցական ուսումնական ծրագրում

Պարբերաբար թարմացնել ծրագրերը՝ ելնելով համայնքի հետաքրքրություններից:

Աշխատանքները պետք է կրկնեն շարունակական բնույթ

- ✓ Բուլինգի կանխարգելումը չպետք է ունենա վերջնաժամկետ
- ✓ Համայնքները պետք է պարբերաբար գնահատեն կանխարգելման կարիքներն ու արդյունքները, վերանայեն ռազմավարությունները և առաջնահերթություն տան երեխաների կյանքի որակի բարձրացմանը:

Վերլուծություն

Թեման վերլուծելու համար հետազոտությունը իրականացվել է կրտսեր, միջին և ավագ դպրոցականների հետ զրույցի մեթոդով, Օլվեուսի բուլինգի բացահայտման հարցարանով և աշակերտների հետ անցկացրած հարցաթերթիկի արդյունքներով: Զրույցի արդյունքով պարզվել է, որ աղջիկների շրջանում առավել հաճախ հանդիպում է խոսքային բուլինգը, ինչպես նաև կեղծ տեղեկությունների տարածումը, ծաղրը: Աղջիկները ենթարկվում են բուլինգի և՛ աղջիկների, և՛ տղաների կողմից:Տղաների շրջանում առավել հաճախ հանդիպում է ֆիզիկական բուլինգը:Տղաները հիմնականում ենթարկվում են բուլինգի տղաների կողմից: Կրտսեր դպրոցականները ճիշտ է, պատկերացում չունեին բուլինգի մասին, բայց անկեղծ պատասխանել էին տրված հարցերին, որի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ կրտսեր դպրոցականները ոչ միայն իրենց հասակակիցների շրջանում են բուլինգի ենթարկվում, այլ նաև՝ օրինակ ծնողների (հարցերից մեկը վերաբերվում էր նրան, թե արդյո՞ք երեխաները տանը պատմում են դպրոցում կատարված դեպքերը,կայն երեխաներ,

ովքեր պատասխանել էին, որ չեն պատմում, որովհետև վախենում են ծնողների արձագանքից՝ մասնավորապես բղավելուց և հարվածելուց):

Օլվեուսի հարցարանով իրականացվող հետազոտությանը մասնակցել են 11-րդ դասարանի 17 աշակերտ, որից ութը՝ տղա, ինը ՝ աղջիկ: Հետազոտության հիմնական խնդիրն է եղել պարզել 11-րդ դասարանում բուլինգի ենթարկվող անձանց և բուլլերներին:

Ուսումնասիրությունների արդյունքը ներկայացրել ենք ստորև՝ գծապատկերի միջոցով:

Դ.Օլվեուսի հարցաթերթիկ

Նպատակը-կրթական միջավայրում բուլինգի տարածվածության և դրսևորման առանձնահատկության բացահայտում:

Նկարագրություն- հնարավորություն է տալիս ստուգել արդյոք անձը ենթարկվել է բուլինգի կամ արդյոք իրականացնում է բուլինգը:

Ուղիղ ակտիվ բուլինգ-կարող է դրսևորվել ֆիզիկական ագրեսիայի ձևով կամ խոսքային ագրեսիայի :

Անուղղակի բուլինգ –սոցիալական օտարացման դրսևորումներ,բամբասանք և այլն

Ուղիղ պասիվ բուլինգ- ֆիզիկական և վերբալ ագրեսիայի ենթարկվել

Անուղղակի պասիվ բուլինգ-սոցիալական դեպրիվացիա



Կրտսեր դպրոցականների հետ իրականացված հարցման արդյունքների վերլուծություն:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և շվեդական <<Գլոբալ թուլոքալ>> կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում իրականացվող հանրակրթական դպրոցներում բուլինգի նվազեցմանն ուղղված ծրագրի շրջանակներում իրականացվել է հարցում, որից, մեր հետազոտական աշխատանքի իրականացման համար օգտվել ենք նաև մենք :

Հետազոտությունն անցկացնելու նպատակով 2-5 դասարաններում 7-10 տարեկան երեխաներին տրվել է 15 հարցից բաղկացած հարցաթերթ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտությանը մասնակցել են 90 աշակերտ, որից 55%-ը՝ աղջիկ, իսկ 45%-ը՝ տղա:

Հարցերն իրենց էությամբ վերաբերվում էին ավելի շատ աշակերտների վարքին: Օրինակ՝ հրմշտու՞մ են ընկերներին թե ոչ, կռվում կամ վիրավորու՞մ են թե ոչ: Կամ արդյո՞ք պատմում են տանը վերոնշյալ խնդիրների մասին :

Հարցված աշակերտների 45%-ը, այն հարցին թե տանը պատմու՞մ է թե ոչ, պատասխանել էին, որ ոչ, քանի որ վախենում են ծնողներից իսկ 55% ը պատասխանել է, որ ասում է :

Հարցման արդյունքում պարզ դարձավ նաև, որ երեխաները բուլինգի հանդիպելու դեպքում 70%-ը անտարբեր չեն մնա, կմոտենան զոհին օգնելու նպատակով,կամ կպատմեն ուսուցչին ,ծնողին:

Այստեղ, կարող ենք արձանագրել և մեկ փաստ, որ աշակերտները վստահում են ուսուցիչներին, չնայած նրան, որ բուլինգի հիմնական դեպքերը գրանցվում են դպրոցում: Ճիշտ է, ուսուցիչների մեծ մասը պայքարում է բուլինգի վերացման համար, բայց կան նաև ուսուցիչներ, ովքեր կամա թե ակամա ենթարկում են երեխաներին բուլինգի :

Եզրակացություն

Այսպիսով, դպրոցի կրթական միջավայրի առանցքային հոգեբանական բնութագիրն անվտանգությունն է: Դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայր ասելով հասկանում ենք փոխազդեցության այն միջավայրը, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և ռեֆերենտային նշանակություն ունի աշակերտների համար: Այնտեղ գերակշռում է հումանիստական կողմնորոշումը (կարևորվում են և՛ սեփական, և՛ ուրիշների հետաքրքրությունները): Հոգեբանորեն անվտանգ կրթական միջավայրը դպրոցականների դրական անձնային աճի կարևորագույն պայման է, որը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ պաշտպանել յուրաքանչյուր աշակերտի անձը, քիչ պաշտպանվածին լրացուցիչ աջակցություն ցուցաբերել ՝ զարգացնելով և իրացնելով նրա անհատական պոտենցիալը:

Այսպիսով եկանք այն եզրակացության,որ բուլլինգի զոհ կարող է դառնալ ցանկացած երեխա, անկախ ֆիզիկական, ինտելեկտուալ կարողություններից կամ նյութական վիճակից: Հոգեբանական վնասներ ստանում են ոչ միայն մասնակիցները, այլ նաև դրա վկաները: Եթե գիտենք, որ դպրոցում առկա է բուլլինգ, ապա չի կարելի այն թողնել ինքնահոսի: Քննարկում ենք դա ուսուցիչների, ծնողների հետ, աշխատում ենք քայլեր և արդյունվետ լուծումներ գտնել: Խոսում ենք երեխայի հետ բուլլինգի մասին, աշխատում ենք զարգացնել հարգանք մյուս մարդկանց նկատմամբ, որպեսզի նա ինքը չդառնա ագրեսոր: Երեխային անվտանգ պահելու առաջին քայլը թե՛ առօրյա կյանքում, և թե՛ առցանց, համոզվելն է, որ նա գիտի՝ ինչ է բռնությունը:

Գրականության ցանկ

1. <<Բուլինգը երևանյան դպրոցական միջավայրում>>Ա. Համբարձումըան(Երևան 2021)
2. <<Բռնության և զոհի հոգոբանություն>>Մ. Միքայելյան(Երևան 2016)
3. <<Երեխաների պաշտպանությունը բռնությունից>> Ձեռնարկ վերապատրաստողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար(Երևան 2019)
4. Հանրակրթական դպրոցներում բուլինգի առկայության վերաբերյալ հետազոտության արդյունքների վերլուծություն(Երևան 2021)
5. <<Անվտանգ և բարենպաստ միջավայրի ապահովումը դպրոցներում>> Վոլդ Վիժն Հաըաստանի <<Նավակ>> երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն